ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԵՎԱԴԱՇՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Թիվ 136 « 10 » դեկտեմբերի 2019թ.

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետ պարոն՝
Հ.Մաթևոսյան

Հարգարժան պարոն Մաթևոսյան

Կից ներկայացնում ենք Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևադաշտ համայնքի դեկտեմբերի 9-ին կայացած ավագանու արտահերթ թիվ 7 նիստի որոշումները:

Առդիր 12 թերթ:

Արևադաշտ համայնքի ղեկավար Հ.Օհանյան

22 ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ Г-21929-201
11 12 2019թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱԴԱՇՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

---

09.12.2019թ N 25

## *ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածով ,

*ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է*

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևադաշտ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 7 նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ավագանու անդամներ՝

| | /կողմ/ | / դեմ/ | /ձեռնպահ/ |
|---|---|---|---|
| 1 .Մ. Օհանյան | | ------- | ---------- |
| 2. Վ. Վարդանյան | ----------- | ----------- | ------------ |
| 3. Խ.Աբասյան | ------------ | --------- | ------------ |
| 4. Զ.Կարապետյան | ------------- | -------------- | ------- ------ |

Արևադաշտ համայնքի ղեկավար Հ.Օհանյան

09.12. 2019թ.

Համայնք Արևադաշտ

*Հավելված*
*Հայաստանի Հանրապետության*
*Արմավիրի մարզի Արևադաշտ համայնքի*
*Ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 9-ի*
*թիվ 7 նիստի*

*ՕՐԱԿԱՐԳՈՒՄ*

*25. ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-Ի ԹԻՎ 7 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

/Զեկ. Հ.Օհանյան/

26. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱԴԱՇՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 20-Ի N 22-Ն ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Հ.Օհանյան/

27-Ն . ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱԴԱՇՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Հ.Օհանյան/

28. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱԴԱՇՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ ԵՎ ԳՐԱԴԱՐԱՆՈՒՄ ԳՈՒՅՔԱԳՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ Մ ԱՍԻՆ

/Զեկ. Հ.Օհանյան/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱԴԱՇՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

09.12.2019թ. N 26

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱԴԱՇՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 20-Ի N22-Ն ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով.*

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

*1. Արմավիրի մարզի Արևադշտ համայնքի ավագանու 2019 թվականի նոյեմբերի 20-ի* <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևադաշտ համայնք վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների 2020 թվականի դրույքաչափերը հաստատելու մասին>> N 22-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչել:

*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:*

Համայնքի ավագանու անդամներ

| | /կողմ/ | / դեմ/ | /ձեռնպահ/ |
|---|---|---|---|
| 1.Վ.Վարդանյան | ---------- | ---------- | ---------- |
| 2 .Մ. Օհանյան | ---------- | ---------- | ---------- |
| 3.Խ.Աբասյան | ---------- | ---------- | ---------- |
| 4.Զ.Կարապետյան | ---------- | ---------- | ---------- |

Արևադաշտ համայնքի ղեկավար Հ.Օհանյան

09.12.2019թ.
Համայնք Արևադաշտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱԴԱՇՏ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

«09» դեկտեմբերի 2019թ. N 27-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱԴԱՇՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ մասով և հիմք ընդունելով 28.11.2019 թվականի Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 17/27.3/27605-19 պետական փորձագիտական եզրակացությունը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևադաշտ համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների 2020 թվականի դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվա հաջորդող տասներորդ օրը:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

| | /կողմ/ | / դեմ/ | /ձեռնպահ/ |
|---|---|---|---|
| 1. Մ. Օհանյան | ---------- | ---------- | ---------- |
| 2. Վ. Վարդանյան | ---------- | ---------- | ---------- |
| 3. Խ.Աբասյան | ---------- | ---------- | ---------- |
| 4. Ջ.Կարապետյան | ---------- | ---------- | ---------- |

Համայնքի ղեկավար Հ. Օհանյան

2019 թվականի դեկտեմբեր«09»ի
թիվ 7 նիստ
Արևադաշտ

ՀԱՍՏԱՏՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱԴԱՇՏԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-Ի
27-Ն ՈՐՈՇՄԱՄԲ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱԴԱՇՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինարարության (տեղադրման) ( բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար՝

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ յոթ հազար հինգ հարյուր դրամ,

բ. սույն կետի <<ա>> ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մեկից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ տասնհինգ հազար դրամ,

- 500-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ քսանհինգ հազար դրամ,

-3000-ից և ավել քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ,

գ .ոչ հիմնական շենքեր և շինությունների համար՝

-մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝մեկ հազար հինգ հարյուր դրամ.

- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ:

2) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն հազար հինգ հարյուր դրամ.

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ

շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի <<ա>> ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենք շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, մասով.

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարության կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում է նոր շինարարության համար սույն հավելվածով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի ) թույլտվության համար՝ հինգ հազար դրամ:

4 ) Համայնքի տարածքում տեղական տուրք սահմանել՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվության համար ՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

-մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև հինգ հազար դրամ -26 մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝հինգ հազար մեկ դրամից մինչև վեց հազար հինգ հարյուր դրամ

-50 մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ վեց հազար հինգ հարյուր մեկ դրամից մինչև տաս հազար մեկ դրամ

-100 մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տաս հազար մեկ դրամից մինչև տասներկու հազար հինգ հարյուր մեկ դրամ

200 մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներկու հազար հինգ հարյուրմեկ դրամից մինչև քսաներկու հազար հինգ հարյուր մեկ դրամ

- 500 և ավել քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսաներկու հազար հինգ հարյուր մեկ դրամից մինչև հիսուն մեկ հազար դրամ.

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

-մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև հինգ հազար մեկ դրամ

-26 մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հինգ հազար մեկ դրամից մինչև վեց հազար հինգ հարյուր մեկ դրամ

-50 մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ վեց հազար հինգ հարյուր մեկ դրամից մինչև տաս հազար մեկ դրամ

-100 մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տաս հազար մեկ դրամից մինչև տասներկու հազար հինգ հարյուր մեկ դրամ

200 մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինություններ ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներկու հազար հինգ հարյուր մեկ դրամից մինչև քսաներկու հազար հինգ հարյուր մեկ դրամ

- 500 և ավել քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսաներկու հազար հինգ հարյուր մեկ դրամից մինչև հիսուն մեկ հազար դրամ.

5) Համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ հինգ հազարից մինչև հիսուն հազար դրամ,

բ. հանրային սնդի օբյեկտների համար՝ քսանհինգ հազարից մինչև հարյուր հազար դրամ,

6)Համայնքի վարչական տարածքում աղբահանություն իրականացնելու համար ամսական տեղական վճար սահմանել, մեկ շնչի համար 100 /հարյուր դրամ:

7) Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ մինչև հազար դրամ փոխհատուցման վճար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել մեկ հազար դրամ:

8) Համայնքապետարանի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար գյուղապետարանի մատուցած ծառայությունների դիմաց սահմանել փոխհատուցման վճար մեկ հազար դրամ:

9) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթներ և աճուրդների մասնակցության համար՝համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել ութ հազար դրամ:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

0010 Երևան, Վ. Սարգսյան 3/8, հեռ. 594004
Էլ. փոստ՝ press@moj.am

12/27.3/27605-19
28 11 19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ, ԱՐԵՎԱԴԱՇՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ Հ. ՕՀԱՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Մարկոսյան

Ի պատասխան Ձեր 2019 թվականի նոյեմբերի 22-ի թիվ 131 գրության՝ կից ներկայացվում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևադաշտ համայնքի ավագանու «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևադաշտ համայնքի համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների 2020 թվականի դրույքաչափերը հաստատելու մասին» որոշման նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացությունը:

**Իրավական ակտերի փորձաքննության գործակալության պետ՝** **Կ. ԽՏՐՅԱՆ**

Կատարող՝ Անահիտ Գևորգյան
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
հեռ. 594116

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևադաշտ համայնքի ավագանու «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևադաշտ համայնքի համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների 2020 թվականի դրույքաչափերը հաստատելու մասին» որոշման նախագծի վերաբերյալ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևադաշտ համայնքի ավագանու «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևադաշտ համայնքի համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների 2020 թվականի դրույքաչափերը հաստատելու մասին» որոշման նախագծի Հավելվածի 2-րդ կետի բ/ և գ/ ենթակետերում «հոդվածի 1-ին մասի» բառերն անհրաժեշտ է փոխարինել «հավելվածի» բառով՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները:

**Իրավական ակտերի փորձաքննության գործակալություն**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱԴԱՇՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

09.12.2019թ. N 28

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱԴԱՇՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ ԵՎ ԳՐԱԴԱՐԱՆՈՒՄ ԳՈՒՅՔԱԳՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել Արևադաշտ համայնքապետարանում և գրադարանի ամենամյա գույքագրման աշխատանքների արդյունքում գույքագրման հանձնաժողովի կազմած փաստաթղթերը համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

| | /կողմ/ | / դեմ/ | /ձեռնպահ/ |
|---|---|---|---|
| 1.Վ.Վարդանյան | ---------- | ---------- | ---------- |
| 2 .Մ. Օհանյան | ---------- | ---------- | ---------- |
| 3.Խ.Արայան | ---------- | ---------- | ---------- |
| 4.Զ.Կարապետյան | ---------- | ---------- | ---------- |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՕՀԱՆՅԱՆ

09.12.2019թ.
Արևադաշտ համայնք

*Արևաշատ համայնքի համայնքապետարանի սեփականություն հանդիսացող գույքի 2019թ գույքագրման փաստաթղթեր*

*ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ*

*համայնք Արևաշատ* *09 դեկտեմբեր2019թ*

*Մենք ներքո ստորագրողներս մասնակցությամբ Արևաշատ համայնքի գույքագրման հանձնաժողովի նախագահ Ա.Քանդոյանի ,հանձնաժողովի անդամներ ,Հ.Վիրաբյանի Վ. Վարդանյանի և Զ.Մաղաքյանի հետ կազմեցինք սույն արձանագրությունը այն մասին,որ սույն թվականի դեկտեմբերի 5-6-ը ընկած ժամանակահատվածում կատարել ենք Արևաշատ համայնքի սեփականություն հանդիսացող գույքի 2019թվականի ամենամյա գույքագրման աշխատանքները:*
*Արդյունքում պարզվեց ,որ Արևաշատ համայնքի գույքային հաշվեկշռում առկա է ներքոհիշյալ օգտագործման համար պիտանի գույքը.*

| հ/հ | Գույքի անվանումը | Ստացման տարեթիվը | Սկզբնական արժեքը | քանակը | Արժեքը առ01.01.2017թ | Տարեկան մաշվածությունը | Մաշվածքի գումարը | Արժեքը01.12.2017թ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Գյուղապետարանի շենք | 1979թ. | 1417763 | 1 | | | 1417763 | |
| 2 | [illegible] պահարան | 1991 | | | | | | |
| 3 | [illegible] փայտյա | 2005 | 94050 | 2 | | | | |
| 4 | Աթոռ պլաստե | 2005 | 39600 | 5 | | | | |
| 5 | Աթոռ փայտյա | 2005 | 25000 | 6 | | | | |
| 6 | գրասեղան | 2005 | 41500 | 3 | | | | |
| 7 | Համակարգչային սեղան | 2005 | 38500 | 1 | | | | |
| 8 | [illegible] սեղան | 2005 | 31900 | 1 | | | | |
| 9 | Անկյունային սեղան | 2005 | 97400 | 1 | | | | |
| 10 | Համակարգիչ LG | 2010 | 329000 | 1 | | | | |
| 11 | Համակարգիչ LOS | 2012 | 300000 | 1 | | | | |
| 12 | Համակարգիչ LG | 2017 | 380000 | 1 | | | | |
| 13 | պրինտ | 2017 | 80000 | 1 | | | | |
| 14 | պատճենահանող սարք | 2019 | 124000 | 1 | | | | |
| 15 | պրինտ | 2011 | 30000 | 1 | | | | |
| 16 | տրանսֆորմատոր | 1967 | 184800 | 2 | | | 184800 | |
| 17 | [illegible] /Մեծ արուն/ | 1960 | 161700 | | | | 161700 | |
| 18 | Կշեռք 15տ | 1985 | 65200 | | | | 65200 | |
| 19 | Խորքային հոր | 1985 | 4267000 | 3 | | | | |
| 20 | Խորքային հոր | 2000 | 28500դոլար | | | | | |
| 21 | Խորքային հոր | 1996 | 323100<br>6092330 | 2 | | | | |
| 22 | Նիվա ավտոմեքենա | 2005 | 4100000 | 1 | | | | |
| 23 | Տրակտոր MTZ 82և /անսարք/ | 2005 | 2500000 | 1 | | | | |
| 24 | Էքսկավատոր vmz | 2005 | 4000000 | 1 | | | | |
| 25 | ZIL 130 | 2006 | 3300000 | 1 | | | | |
| 26 | Խոտհնձիչ E 302/անսարք/ | 2006 | 7000000 | 1 | | | | |
| | ԳՐԱԴԱՐԱՆ | | | | | | | |
| 27 | գրքեր | 1985 | | 2077 | | | | |
| 28 | պահարան | 1985 | | 1 | | | | |
| 29 | Ընթերցման սեղան | 1985 | | 1 | | | | |
| 30 | Գրասեղան 2 տումբանի | 1985 | | 1 | | | | |
| 31 | [illegible] երկաթե | 1985 | | 6 | | | | |
| 32 | Աթոռ երկաթե | 1985 | | 4 | | | | |

Հանձնաժողովի նախագահ Ա.Քանդոյան
Անդամներ Հ.Վիրաբյան
Վ.Վարդանյան
Զ.Մաղաքյան

Արևադաշտ համայնքի համայնքապետարանի սեփականություն հանդիսացող գույքի 2017թ գույքագրման փաստաթղթերը

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Համայնք Արևադաշտ 09 դեկտեմբեր 2019թ

Մենք ներքո ստորագրողներս մասնակցությամբ Արևադաշտ համայնքի գույքագրման հանձնաժողովի նախագահ Ս. Քանդոյանի, հանձնաժողովի անդամներ Հ. Կիրակոսյանի, Վ. Վարդանյանի և Զ. Մաղաքյանի հետ կազմեցինք սույն արձանագրությունը այն մասին, որ սույն թվականի դեկտեմբերի 5-6-ը ընկած ժամանակահատվածում կատարել ենք Արևադաշտ համայնքի սեփականություն հանդիսացող գույքի 2019թվականի ամենամյա գույքագրման աշխատանքները:

Արդյունքում պարզվեց ,որ Արևադաշտ համայնքի գույքային հաշվեկշռում առկա էր ներքոհիշյալ գույքը ,որը պիտանի չի օգտագործման համար ,ուստի հանձնաժողովըորոշեց դուրս գրել գույքային հաշվեկշռից:

Դուրս գրվող գույքի ցանկը

| հ/հ | Գույքի անվանումը | տարեթիվը | Սկզբնական գումարը/հազար դրամ/ | քանակը | պիտանելիությունը | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | պատճենահանող սարք | 2014 | 100000 | 1 | Ոչ պիտանի | Դուրս է գրվել |
| | | | | | | |
| | | | | | | |
| | | | | | | |

Հանձնաժողովի նախագահ Ս.Քանդոյան

Անդամներ Հ.Կիրակոսյան

Վ.Վարդանյան

Զ.Մաղաքյան